

ԳԻՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ, ԱՐՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԺԱ. - ԺԴ. ԴԱՐԵՐԻ ՆԱՅԱՍԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՒՈՎՈՒՅԹՈՒՄ*

Նայագիպական շրջաններին քաջածանոթ Կլոդ-Արմեն Մուրաֆյանը անցած նոյնները ամսին Փարիզի լավագույն հրապարակիչներից մեկի՝ «Les Belles Lettres»-ի շարքում հրապարակեց 2002 թ. Փարիզ Ա. (Սորբոն) համալսարանում պաշտպանած իր դոկտորական ավարտաճառի հիմնովին վերանայված տարբերակը: Գրքի մեջ, բացի Կիլիկիայից ներառված է Մեծ Նայքի եւ գաղութների, մի խոսքով՝ ողջ հայաշխարհի (Monde Arménien) ԺԱ.-ԺԴ. դդ. քաղաքական, եկեղեցական եւ մշակութային պատմությունը: Ղեկը է նկարի ունենալ, որ մենագրությունն ունի հանրագիտարանային բնույթ եւ, հիմնվելով սկզբնաղբյուրների վրա, հավակնում է պատասխանել դարաշրջանի Նայոց պատմության գրեթե բոլոր հիմնական խնդիրներին: Գրքի առաջին հատորում ամփոփված է հեղափոխությունը, երկրորդում՝ ազգաբնակչության ցանկերը, աղյուսակները, քարտեզները, պատկերները, մատենագիտությունը եւ անվանացանկերը, որոնցով լրացվում է մենագրությունն ու ստեղծվում դարաշրջանի քիչ թե շատ ամբողջական պատկերը: Առաջին հատորում օգտագործված է հղումների հստակ սկզբունք. բացի տողաբանական ծանոթագրություններից, հեղինակն օգտագործում է լուսանցքները, հղելով երկրորդ հատորում ներկայացված դիդակտիկ նյութերը (Ծագումնաբանական ցանկեր (G), ամուսնական կապերի աղյուսակներ (T), քարտեզներ (C) եւ լուսանկարներ (R)): Մեր նպատակն է հայագետների ուշադրությունը հրավիրել գրքում արժարժված խնդիրների այժմեականության եւ թարմության վրա: Գիրքը գրված է համաշխարհային պատմական գործընթացների, աղբյուրների քննական վերընթերցման եւ Նայոց պատմության իրադարձությունների համակողմանի քննության հիմքի վրա:

Գրքի առաջին հատորում հայագիտության զարգացման ամփոփ ակնարկից հետո, հեղինակն անցնում է սկզբնաղբյուրների ներկայացմանը (Էջ 16-47)՝ բաժանելով դրանք երկու խմբի՝ հայկականի եւ ոչ հայկականի, հիմնականում անդրադառնում է պատմագրությանը եւ կատարում հետաքրքիր դիտողություններ: Այնուամենայնիվ, այս բաժնում

* Ներկա հոդվածում գրախոսվում է վերջերս Փարիզում հրապարակված **Կ. Մուրաֆյանի**, «Մերձավոր Արեւելքի Նայասարանը (ԺԱ.-ԺԴ. դարեր)», հր. Ա.-Բ., Փարիզ, 2012 (Claude Mutafian, L'Arménie du Levant (XI^e-XIV^e siècle), 2 vol., Paris, Les Belles Lettres, 2012, 734 + 408 p.) մենագրությունը:

կարելի էր ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ օրինակ Միքայել Ասորու երկի մասին խոսվում է նաև հայկական (էջ 24), եւ՝ օտար սկզբնաղբյուրների բաժիններում (էջ 43), իսկ «Քարթլիա Յիսուկերայի» մասին միայն վրացական բաժնում, նկարի չառնելով այդ երկի միջնադարյան հայերեն թարգմանության բնագրի² յուրահապկությունները: Բացարկված չէ, թե ինչու՞ են խաչակրաց Կիպրոսի լարինագիր հուշարձանները, Բյուզանդական եւ վրացական այլալեզու պարմագրական հուշարձանների հետ միասին, հայտնվել «Արեւելյան քաղկեդոնական աղբյուրներ» (էջ 41-43) ապակողմնորոշող վերնագրի փակ: Գրքի շարադրանքում չարժեր «Կեղծ» անվանել Փավստոս Բուզանդի անունով մեզ հասած պարմությունը /էջ 259, փ. 15 եւն./, ինչպես նաև «Ընդարձակ Սմբար» /էջ 89, փ.24, 92, փ.2, 190, փ.27 եւ այլուր/ անունով հայտնի ժամանակագրությունը, քանի դեռ հստակորեն չի ճշգրտվել, թե այդ երկերում ի՞նչ, ո՞վ եւ ինչպե՞ս է կեղծել կամ կեղծվել³:

Նաջորդ հարվածն անվանված է «Ռուբինյաններն ու ֆրանկները. Թագավորության ծնունդը (1045-1219)» (48-111): Անդրադառնալով Բագրատունիների պետության պարմությանը, հեղինակը ներկայացնում է Բյուզանդիայի եւ սելջուկների քաղաքականությունն Այսրեղծկասում, Մերձավոր Արեւելքում՝ այդ ֆոնի վրա ներկայացնելով հայկական պետության անկումը եւ վրացականի բարձրացումը⁴, ԺԱ. դարում հայկական բնակչության արտագաղթը հայրենի գավառներից եւ վերահաստատումը Կիլիկիայում: Օգտագործելով հայտնի հիմնական գրականությունը՝ հեղինակը բնութագրում է Փիլարպոսի ժամանակներից Մերձեփրայան տարածքներում հաստատված Մելիտենեի, Եղեսիայի, Մարաշի⁵, Քեսուռի հայազգի կառավարիչների մասին պահպանված սկզբնաղբյուրները, ներկայացնում Առաջին խաչակրաց արշավանքի ղեկավարներին, ֆաթիմյան վեզիր հայազգի ալ-Աֆդալի կողմից Երուսաղեմի կողմից հանձնումը խաչակիրներին: Այստեղ կարելի էր անդրադառնալ նաև սելջուկյան նվաճումների յուրահապկություններին, իսկ մոնղոլներին վերաբերող մասում ցույց տալ նրանց փրապետության առանձնահատկությունները: Ամենուին գաղտնիք չէ, որ Սելջուկների ռազմարշավից հետո Մերձավոր Արեւելքում ստեղծվեցին անիշխանական *սակկավներ*, որոնցից մի քանիստն իրենց իշխանությունը հաստատեցին բուն Նայասարանից դուրս եկած ռազմաքաղաքական ուժերը՝ ժամանակի ընթացքում իրենց պետականությունը հաստատելով այդ տարածքների վրա: Ներկայացնելով 1098-1118 թթ. Նյուսիսային Ասորիքում տեղի ունեցած իրադարձությունները՝ Կ.Մուրաֆյանը մասնագետների ուշադրությունն է հրա-

2 Տե՛ս «Քարթլիա Յիսուկերայի» իմն հայերեն թարգմանությունը, լույս ընծայեց Իլիա Աբուլաճեն, Թբիլիսի, 1953: Աշխատանքում համադրված են սկզբնաղբյուրի միջնադարյան վրացերեն եւ հայերեն զուգահեռ բնագրերը:

3 Տե՛ս Ն. Մարգարյանի եւ Ա. Բոգդյանի գրախոսությունը Ժ. Դեղեյանի հրատարակած Սմբարի ընդարձակ խմբագրության ֆրանսերեն թարգմանության հրատարակության առիթով. ԴԲՇ, 1981, 2, էջ 286:

4 Գրքում կարող է օգտակար լինել նաև **A. C. Peacock**, «Georgia and the Anatolian Turks in the 12 th and 13th centuries», *Anatolian Studies* 1/1 (2006). pp. 127-146 աշխատությունը:

5 Մերենա Կ.Մուրաֆյանի աչքից վրիպել է, որ Թաթուլ իշխանը, ըստ պահպանված կնիքների, կարող է լինել Բալուրիան իշխանական տոհմից: Տե՛ս **В. П. Степаненко, В. С. Шандровская**, «Татул и Пакурианы». *Античная древность и средние века*. 2005. Вып. 36, стр. 171-193:

վիրում դրանց նկատմամբ հայ միջնադարյան պարմագրության և ազգաբնակչության վերաբերմունքի վրա, անդրադառնում է խաչակիրների հեղի հայ իշխանների սրելոծած խնամիական կապերին, որոնցով և բացառաբար է փառաձայնության պարմության որոշ միպումներ: Մինչ խաչակիրների երևալը, հայկական գինվորական ուժերը փառքեր միջոցներով փորձում էին արել դառնալ Մերձեփրապյան գավառներին, իսկ Կիլիկիայի հայկական երկու իշխանական արևելք՝ Ռուբինյաններն ու Նեթումյանները, հերգիսներ ամրապնդում էին իրենց դիրքերը փառաձայնություն: Նկարագրվել է այսպիսի հեղինակի այն միպը, թե Կիլիկիան մինչև 1137 թ. *դե յուրե* բյուզանդական էր, *դե ֆակտո*՝ նորմանական, իսկ Բուհեմունդի կողմից 1100 թ. սրելոծված Անպիտքի լարին պարբիարությունը ենթարկվող Տաբաթի և Մամիսպարայի եպիսկոպոսական աթոռները մինչև 1198 թ. Ռուբինյանների ձեռքին լարիններին առաքելությամբ գործիքներ էին /Էջ 64-65/: Պակաս հերաբերքի չէ նաև հեղինակի այն արևակետը, որ իր փեսա Վասիլ Տղայի միջոցով Լևոն Ա. իշխանը փորձում էր պաշտոնականացնել Ռուբինյանների իշխանապետությունը իբրև Գող Վասիլի ժառանգորդ /Էջ 66/: Նիշարժան է հեղինակի դիտարկումը, ըստ որի Եդեսիայի Կոմս Ժոսիկ Ա.-ի առաջին կինը կարող էր լինել Ռուբինյան իշխանների բույրը /Էջ 67, 68/, իսկ Լևոն Ա. իշխանի կինը պիտի լիներ Պաղարիս Բ. Երուսաղեմացու դստերից կամ հարազատներից մեկը /Էջ 68/: Պարմագրության մեջ առաջին անգամ ուշադրություն է հրավիրվում Նովիաննես Բ. Կոմսի կողմից 1137/8 թ. այդ արիկոնց գերության փաստի վրա /Էջ 75/ և հերագրության ոլորտ և ներգրավվում Միքայել Իսրայիկոսի կողմից Նովիաննես Աբսուխին ուղղված նամակները /Էջ 75/: Կ. Մուրթաֆյանը գրքի ողջ շարադրանքի ընթացքում հիմնականում հղում է հնարավոր բոլոր սկզբնաղբյուրները և գրականությունը, սակայն, երբեմն էլ չի հերկում իր սկզբունքին, օրինակ. խոսելով 1126-27 թթ. Իկոնիայի ներսում Արաբ Դանիշմանյանի ծավալած ներքաղաքական պայքարի նշանակության մասին /Էջ 69/, մոռանում է հղել գիտական գրականությունը⁶: Մեր կարծիքով, Թորոս Ա.-ից Լևոն Ա.-ին իշխանության փոխանցման հանգամանքներին վերաբերող /Էջ 69-70/ հարվածները կարելի էր ավելի խորացնել⁷, կամ Իսահակ Կոմսի նկատմամբ Լևոն Ա.-ի քաղաքականությունը /Էջ 71-72/ ներկայացնել ավելի լայն պարմական ենթարկեցություն⁸, անդրադառնալ Լևոն Ա. իշխանի կողմից Նովիաննես Բ. Կոմսին կայսերը ցույց արված դիմադրության որոշ մանրամասներին /Էջ 74⁹, որոնք կարող էին ավելի ընդգրկուն դարձնել պարկերը: Կ. Մուրթաֆյանը վարանում է թվագրել Թորոս Բ. իշխանի կողմից Կիլիկիայի իշխանապետության վերականգնման թվականը /Էջ 77/, անգամ չի ընկալում Բ. խաչակրաց ռազմարշավի բերած գաղափարախոսությամբ պայմանավորված և գրականության մեջ առաջարկ-

6 Նմմր. Ա.Բոգոյան, *Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և կիլիկյան հայապարսնը* ԺԲ, դարի 30-70-ական թվականներին, Եր. 1988, էջ 57-58, 62-63:

7 Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյանի՝ «Խաչակիրները և հայերը» գրքի մեր գրախոսությունը (Բանբեր Մարենադարանի, այսուհետև՝ ԲՄ), 18, Եր. 2008, էջ 322; նմմր. Ա.Բոգոյան, *Բյուզանդիայի...*, էջ 95, ծան. 150; G. Dedeyan, *Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés*, Lisbonne, 2003, vol. I, p. 527:

8 Տե՛ս Ա.Բոգոյան, *Բյուզանդիայի...*, էջ 87-88:

9 Տե՛ս Ա.Բոգոյան, *Բյուզանդիայի...*, էջ 111-116:

ված փարբերակը¹⁰: Այս հատվածում հեղինակը մասնագետների ուշադրությունը սրում է Թորոս Բ.-ի լեզվափոխության խնդրի վրա /էջ 77/¹¹, շեշտադրում նրա վարած քաղաքականության կառուցողական բնույթը /էջ 81-82/: Մյուս կողմից, Մուրաֆյանի սիրած պարամական կերպարներից է, որը, դաշնակցելով Նալեյի մոսուլման փրակալ Նուր ադ-Դինի հետ, դրել է Կիլիկիայի պերսական անկախ քաղաքականության հիմքերը /էջ 83-86/: Այս պրեսանկյունից արժեք ավելի լայն քաղաքական ենթարկերարի մեջ քննարկել Նայոց կաթողիկոսությունն Անտիոքի պարփառքական աթոռ վերանվանելու պրամադրությունները¹², որոնք ավելի հստակվեցին ԺԲ. դարի վերջին՝ Անտիոք քաղաքը ռազմական ուժով նվաճելու փորձերի ժամանակ: Մյուս կողմից /1175 թ./ հետո, Կիլիկիայի քաղաքականությունը կարող լարվում էր նրանցինքն է սրանում /էջ 87/, սրվում են փոխաբերությունները Իկոնիայի սուլթանության և Այյուբյան Եգիպտոսի հետ: Նեղիական ավելի մասնագիտորեն կանոնադառնար ԺԲ. դարի Վրաստանի քաղաքականությանը, եթե հիմնվել վրացագիր Ն. Մարգարյանի մեկնադրության արդյունքների վրա¹³: Այնուամենայնիվ, Կ.Մուրաֆյանն ամենուր փորձում է ճշգրտել սկզբնաղբյուրների պեղելությունները և հարթել գիտական գրականությունը սպորտած թյուրիմացությունները, և ի պատիվ նրա պետք է ասել, որ բոլոր սկզբնաղբյուրները նորովի վերբնութեցված են: Նայովածի վերջին մասը նվիրված է Լևոն Մեծագործի իշխանության դարաշրջանին, ուր հեղինակն անդրադառնում է գահի ժառանգման նրբություններին¹⁴, Լևոնի իշխանության առաջին փառքների փառասիրության դրսևորումներին¹⁵, դարաշրջանի իրադարձություններին (Երուսաղեմի անկում և Խաչակրաց Գ. արշավանք), որոնք իրենց կնիքն են դրել Կիլիկիայի պարամության վրա, ինչ որ իմաստով պայմանավորել թագադրության¹⁶ և միջազգային ճանաչման խնդիրները: Թագադրությունից հետո Լևոն Ա. թագավորն¹⁷ իր ջանքերն ուղղում է Մերձավոր Արևելքի քրիստոնյա պետությունների (Լարի-

10 Տե՛ս Ա.Բոգոյան, *Բյուզանդիայի...*, էջ 164-190, հարկապես, էջ 180:

11 Կառաջարկներ մեկ այլ աշխարհային փարբերակ ետ, որը բխում է Կ. Մուրաֆյանի այն հիմնադրույթից, թե Լևոն Ա.-ի փարբեր կանանցից են ծնվել Ստեփանեն ու Մլեքը, Ռուբենն ու Թորոսը: Մրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, թե ինչու հարկապես վերջիններիս է Նովիանեն Կոմենետը գերեզմանը Կ.Պոլիս:

12 Տե՛ս Ա.Բոգոյան, *Նայ-բյուզանդական...*, էջ 192-205: Այս խնդրին Կ. Մուրաֆյանն անդրադառնում է միայն եկեղեցական բանակցություններին վերաբերող հատվածում /էջ 549/:

13 Տե՛ս հարկապես Ն. Մարգարյան, *Նյուսիսային Նայաստանի և Վրաստանի ԺԲ. դարի պարամության մի քանի հարցեր*, Եր. 1980:

14 Այս խնդիրը հեղինակի ուշադրության կենտրոնում է. այդ է պարզապես, որ ետ անդրադառնում է Կիլիկիայի գրեթե բոլոր միապետների իշխանության լեզվափոխության դրսևորումներին՝ հաճախ երկխոսության մեջ մտնելով Լ. Տեր-Պետրոսյանի առաջադրած փեսայների հետ, երբեմն էլ հակադրվելով դրանց (օրինակ, էջ 214-215, հմմտ. Լ.Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հր. Բ, Եր. 2007, էջ 408-424 եւն.):

15 Բերելով մինչ թագավոր դառնալը Լևոնի համար օգրագործվող փառքները/էջ 92/՝ կարծում ենք կարևոր էր արձանագրել Ներսես Լամբրոնացու թողած օգրագործված «քրիստոնյա իշխող», «իսկանակալ» կոչումները, որն նաև ԲՄ, 18, էջ 325-326:

16 Նեղիական առանձին քննարկում է թագադրության թվականի խնդիրը, և հարցի աղբյուրագիտական քննությունից հետո կանգնում է 1198 թ. հունվարի 6-ի վրա /էջ 99-101/:

17 Կ.Մուրաֆյանն առանձին վերնագրի («Դեպես Լևոն Բ.-ն դարձավ Լևոն Ա.») փակ անդրադառնում է պարամասներին հուզող խնդրի բացատրությանը /էջ 97-98/, իսկ հետագա շարադրանքում և Շագունաբանական աղյուսակներում փախ Կիլիկիայի միապետների՝ իր կողմից ճշգրտված, պաշտոնական

նական, Տրապիզոնի և Նիկիայի կայսրություններ, Վրաստանին ենթակա Զաքարյան իշխանություն) հետ փոխհարաբերությունների զարգացմանը, ակտիվորեն միջամտում է Անրիոքի իշխանության ներքին կյանքին և պարերազմում նրա դեմ՝ սեփական իրավունքների պաշտպանության համար: Այդ պայքարում Լեոն Ա.-ն իր կողմն է գրավում նույնիսկ Հռոմի պապին, Սրբազան հռոմեական կայսրությանը, *Հոսպիտալիտերի* գիևվորական հոգևոր միաբանությանը /թ. 103/ և 1216 թ., վերջապես նա հասնում է իր նպատակին՝ Անրիոքի իշխանության գահին նստեցնելով իրեն ժառանգ հռչակած Ռուբեն-Ռայմոնդին: Անընդհատ պարերազմների այս քաղաքականությունն էլ հավանաբար սպառնց Դիլիկիայի փոխնական ներուժը և երկիրը չկարողացավ դիմադրել Բկունիայի սուլթանության 1216 թ. ներխուժմանը, ունեցավ փարածքային կորուստներ և դարձավ վերջինիս հարկատու: Լեոն Ա.-ը նաև հիասթափվեց իր կողմից հովանավորվող Ռուբեն-Ռայմոնդից, փորձելով հարթել իր պետության ապագան՝ նա, սեփական դուստր Զաբելին ամուսնացնելու միտումով, բանակցություններ վարեց Հունգարիայի գահաժառանգի հետ: 1219 թ. Լեոն Ա.-ի մահով այս պլանները եւս ի չիք դարձան:

Հաջորդ հարվածը վերնագրված է “Ներումյաններ”¹⁸ և մոնղոլներ. Թագավորության վերելքը (1219-1289)” /էջ 112-170/: Լեոնի մահից հետո, շուրջ հինգ տարի կառավարական ճգնաժամը շարունակվում էր երկրում: Կ. Մուրաֆյանը ճշտում է Լեոնի ժառանգի՝ Զաբելի ծննդյան թվականը /էջ 114/, Լեոնի մյուս հավանական ժառանգների գահի համար պայքարի հիմնական փուլերը և Հռոմի պապության դերն այդ պայքարում /էջ 115-117/ Դիլիկիայի վերնախավի համար անհաջող, Զաբելի առաջին՝ Ֆիլիպ Անրիոքցու¹⁹ հետ պսակադրությունից հետո: Վերջապես Զաբելին հաջողվեց ամուսնացնել իր հոր հարազատ քեռու որդու, գահի խնամակալ Կոստանդին պալլի (հմմտ. Գ 42) գավակ Ներումի հետ: Կ. Մուրաֆյանն անդրադառնում է Բկունիա-Դիլիկիա միջպետական փոխհարաբերությունների բնույթին /էջ 119/, այդ պայքարում հստակեցնում է Լամբրոնի Ներումյանների դերը /էջ 120/, նոր՝ հայագիտությանն անձանոթ նյութեր է շրջանառության մեջ դնում հայ-լարին փոխհարաբերություններից /էջ 120/: Այնուհետև հեղինակն անդրադառնում է մոնղոլական պետության սրելծմանը, հավաքալիքներին և լայնածավալ այդ պետության մեջ նեստորական հոգևորականության խաղացած դերին: Կ. Մուրաֆյանը մոնղոլական կայսրության հիմնադրման հետ է կապում լարին պարմագրությանը հայերի “Հովհաննես քահանայի”²⁰ առասպելախառն պարմությունները /էջ

հերթականությունը (հմմտ. էջ 192, 428-429, Գ 43-45):

18 Պարբ է նկարի ունենալ, որ Կ. Մուրաֆյանը, հիմնվելով սկզբնաղբյուրների վրա, հավաստում է, որ Ներումյանները թեպետ շարունակում են դիպվել իբրեւ Ռուբինյաններ /էջ 118/, սակայն շարունակում են իրավացիորեն օգրագործել Ներումյան արմատները:

19 Կ. Մուրաֆյանը Ֆիլիպ Անրիոքցու, իսկ հետագայում՝ Գի դը Լուսինյանի սպանության պարճառ է համարում ոչ միայն նրանց լարինամեր կեցվածքը, ինչպես դա ընդունված է հայ պարմագրության մեջ, այլ նաև հայկական կառավարող վերնախավի նկատմամբ նրանց կողմից ցուցաբերած գոռոզամտության դրսևորումները /էջ 116, 213-214/:

20 Հովհաննես քահանայի նկարագրած պետությունը ժամանակակից պարմագրության մեջ երբեմն նույնացվում է Կարա-Նիքրայների, ինչպես նաև Վրաց թագավորության հետ (տես **Л. Н. Гумилёв, Поиски вымышленного царства. Легенда о «государстве пресвитера Иоанна»**, М.: Айрис-Пресс, 2003; **Շոթա Բաղրիձն, Վրաստանի փոխհարաբերությունները Բյուզանդիայի և Արևմտյան Եւրոպայի**

121-124/՝ աղերսելով դրանք Կովկաս կայսրաբան նրանց առաջին ներխուժման արձագանքների և Ե խաչակրության իրադարձությունների հետ: Նա անդրադառնում է Ջալալ աղ-Դինի ռազմարշավներին և մոնղոլների կողմից Կովկասի երկրների հապարակեցմանը, եվրոպային օգնության կանչող վրացական պետության դիմումներին, Կիլիկիայի հայկական թագավորության սպասողական դիրքին՝ ի դեմս Իկոնիայի սուլթանության և մոնղոլների բախմանը վերջինիս հետ, որը փոխի ունեցավ -Քյոսե Դաղում /Էջ 124-133/: Մանագլերի /1071 թ./ և -Քյոսե Դաղի ճակատամարտերի նշանակությունը փարածաշրջանի և համաշխարհային պայմանության զարգացումների վրա, կարելի է դնել նույն հարթակի վրա: Դրանցից հետո ուժերի դասավորությունը միջազգային ասպարեզում շրջադարձորեն փոխվում է: Եթե առաջինից հետո սելջուկ-թյուրքերին անցավ Մերձավոր Արևելքի ճակատագրի փոփոխումը, ապա երկրորդում՝ մոնղոլները կարողացան իրենց ձեռքը վերցնել համաշխարհային փոքրակերպության լծակները և առևտրական ճանապարհները: 1243 թ. -Քյոսե Դաղի ճակատամարտով մոնղոլները փոքր դարձան Փոքր Ասիայի մեծ մասին, Կիլիկիայի հայկական թագավորությունն սպիպված էր ճանաչել մոնղոլների գերիշխանությունը և, խոստովանալով ինքնուրույն իրենց հանձնեց իր երկրում ապաստան գտած Իկոնիայի փոքրակալի ընտանիքին, թեպետ, ըստ Կ.Մուրաֆյանի, սուլթանի մայրը՝ Մահ-Փերի Խաթունը, հայկական ծագում կարող էր ունենալ /Էջ 134-135/: Նեղինակն իրավացիորեն այս իրադարձությունների հետ է կապում 1244 թ. Երուսաղեմի երկրորդ անկումը, որն ազդարարում էր մոնղոլների դեմ սրելոված՝ մերձավորարևելյան մուսուլմանական պետությունների նոր դաշինքի մասին/Էջ 135/, որի մի կողմում հայտնվել էին մոնղոլները և իրենց նվաճած, սակայն դեռևս ինքնիշխան՝ Վրաստանի և Կիլիկիայի հայոց քրիստոնյա պետությունները, իսկ մյուս կողմում՝ Իկոնիան, Կարամաններն ու Մերձավոր Արևելքի Այյուբյան պետությունները: Գույուկի թագադրման արարողության ժամանակներում /1246 թ. օգոստոս/ նվերներով խանին և նրա մերձավորներին այցելության էին շրջապում փարածաշրջանի /Վրաստանի, Տրապիզոնի, Իկոնիայի ևն./ և եվրոպական բազմաթիվ պետությունների /Հոմի պապություն, Ֆրանսիա ևն./ ներկայացուցիչներ: Նայաստանի նկատմամբ մոնղոլների ծրագրերը ճշգրիտ առաքելությամբ խաների մայրաքաղաք է ճանապարհորդում նաև Կիլիկիայի Նեթում թագավորի եղբայր Սմբատը, որը հեղինակի հաշվումներով Կարակորում պետք է հասած լինի 1247 թ. վերջին կամ 1248 թ. սկզբին, այսինքն՝ Գույուկի թագադրումից գրեթե մեկ տարի անց /Էջ 136-139/: Վերջինիս դեսպանագնացության արդյունքներից էր Կիլիկիայի նկատմամբ մոնղոլների իշխանության ճանաչումն ու մոնղոլների հետ համագործակցության ապահովումը, որը հաստատվելու համար Սմբատն ամուսնացավ Կարակորումի արքունիքի իշխանադստրերից մեկի հետ (G 33): Նեղինակը փորձում է պարզել թե Գույուկի թագադրության արարողությանը ներկա հյուրերից ո՞ւմ նկատի ունի Զուվեյնին, անվանելով “le sultan de takvor”/Էջ 137, Գ. 5, 15/: “Թագավոր” եզրի առկայությունը դարաշրջանի մի շարք արարալեզու, պարսկալեզու և ասորալե-

զու սկզբնաղբյուրներում հանգեցրել է փարբեր մեկնաբանությունների. Կ. Մուրաֆյանը ենթադրում է, որ այսպեղ խոսքը կարող է գնալ Զաքարյան Ավագի մասին: Կարծում եմ փերմինի շուրջ պրպարումները պիտի շարունակվեն՝ ներառելով դարաշրջանի ողջ մուսուլմանական և քրիստոնեական պարմագրությունը: Թեպետ, եթե մոտենանք դրամագիտության²¹ փեսանկյունից, «թագավոր» փիպղոսի միակ թեկնածուն մնում է Կիլիկիայի Նայոց թագավորը: 1252 թ. նոր խան Մանգույի արքունիք է շրապում Ներում թագավորը /Էջ 139-143/: Երկու եղբայրները (թե՛ Մմբար, և թե՛ Ներումը) Կարակորում են շրապել ծպաված և փարբեր ճանապարհներով (C 27), որի ընթացքում հանդիպումներ էին ունենում մոնղոլ բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց իշխանությունը ճանաչած հայ իշխանների հետ: Կ. Մուրաֆյանն անդրադառնում է 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրին և բուն Նայաստանում մոնղոլների վարած դաժան քաղաքականությանը, Իլխանության սպեղծմանն ու մինչև 1260 թ. Նուլավուի վարած հաղթական պարերազմներին, Բաղդադի գրավմանը /Էջ 140-147/: Մոնղոլների և մամլուկների հակամարտության /1260-1270 թթ./ ֆոնի վրա հեղինակն անդրադառնում է Ասորիքի և Պաղեստինի ռազմական գործողություններին, Կիլիկիայի և Անտիոքի փարածքային ձեռքբերումներին, 1260 թ. մոնղոլական բանակի՝ Զալուփում կրած պարտությանը, միջազգային դիվանագիտական պայքարի սրությանը²², Ներումյանների երկու ճյուղերի (Լամբրոնի և Պապերոնի) ներքին հակամարտությանը, Կարաման-մամլուկյան դաշինքին, 1266 թ. մամլուկների ռազմարշավին դեպի Կիլիկիա և դրա հետևանքներին /Էջ 148-160/: Նեղինակը մանրամասնորեն անդրադառնում է Լեոն Բ.-ի քաղաքականությանը /Էջ 160-170/, մասնակի հաջողություններին և մամլուկների հետ կնքած սրիպողական պայմանագրերին:

Աշխարհների հաջորդ հարվածը վերնագրված է “Ներումյաններ և մամլուկներ. թագավորության հոգևարքը (1289-1375 թթ.)” /Էջ 171-224 /: Նեղինակը, քննելով սկզբնաղբյուրների վկայությունները, ճշտում է Լեոն Բ.-ի ընթանիքի անդամների ճշգրիտ թիվը, նկարագրում է Ասորիքում խաչակրաց վերջին ամբոթյունների, ինչպես նաև կաթողիկոսների նստավայր Նոմկլայի անկումը (1293 թ.), անդրադառնում է Ղազան խանի որդեգրած հակաքրիստոնեական քաղաքականությանը, 1298 թ. մամլուկների՝ Կիլիկիայի դեմ սանձագերծած նոր պարերազմին, Նոմում՝ մոնղոլների և քրիստոնյաների միասնական բանակի վերջին մեծ հաղթանակին (1299 թ.), քննում է Նայոց թագավորի՝ Երուսաղեմ մարներու խնդրահարույց հարցը /Էջ 179-180/: Անդրադառնում է Ղազանի կյանքի վերջին փարիներին ձեռնարկված անարդյունք ռազմարշավներին (1300 և 1303 թթ.), Օլջայթու խանի (1304-1316) դիվանագիտական ձեռնարկներին, Այսբեկվասի քրիստոնյաների նկարմամբ իրականացված անուախաղեպ հաղածանքներին, որոնք ավելի խստացան Աբու Մալիկի (1317-1335) խանության և նրա մահից հետո սկսված անիշ-

21 Վերջերս է լույս փնել **Ruben Vardanyan, Sylloge Nummorum Romanorum Armenia**, vol. I, *Roman Republic*, Yerevan, 2011 աշխարությունը, որտեղ ամիոփված են կիլիկյան դրամագիտության վերջին նորությունները:

22 Այդ մասին վկայում է նաև Միխթար Սկեռացու “Յաղագս համապարտութեան երկուրասան առաքելոց” երկը, *Գանձասար*, Ե, 1994, էջ 137-157; Զ, 1996, էջ 403-420:

խանության փառիներին: Նեղինակը, ներկայացնելով Բյուսանության անկման գործընթացը, վերադառնում է Կիլիկյան Նախասրանի պարմության խնդիրներին՝ պապական արքունիքի հետ ԺԳ. դարի վերջի փոխհարաբերություններին, նոր խաչակրությունների ծրագրերին /Էջ 188/, Նեթում Բ ֆրանցիսկյան վանականի դավանական և պետական քաղաքականությանը /Էջ 188-194/, նրա եղբայրներ Թորոսի, Սմբարի, Կոստանդինի, ինչպես նաև Լևոն Գ-ի իշխանության բնույթին, 1307 թ. Փիլարդուի կողմից Նեթում Բ-ի և Լևոն Գ-ի սպանությանը, Օշին թագավորի և նրա կանանց ծագումնաբանությանը /Էջ 195-196/: Կ. Մութաֆյանն անդրադառնում է 1306-1322 թթ. հայ-կիպրական քաղաքական և ամուսնական փոխհարաբերություններին /Էջ 196-199/, հակամարտությանը, նրանց և լատին եկեղեցու ծրագրերին: Նեղինակը մանրամասնորեն քննարկում է 1307-1342 թթ. Կիլիկիայի և Արևմուտքի պետությունների քաղաքական ծրագրերը և փոխհարաբերությունները /Էջ 200-209/, խաչակրաց նոր ռազմարշավների պլանները, Լևոն Դ-ի (1321-1341) և պալլ Օշին Կոնիկոսցու գործունեությունը, 1323 թ. Այասի ալաբառությունը և մամլուկների հետ կնքված նոր պայմանագրին: Ճշգրտում է Նեթում Նդիրցու դեսպանագնացությունների և Կոնստանսա Արագոնացու հետ Լևոն Դ-ի ամուսնության թվականները: Անդրադառնում է 1335 և 1137 թթ. մամլուկների նոր ռազմարշավներին և պապական կուրիայի միջոցառումներին: Պակաս հետաքրքիր չեն հեղինակի դիտարկումները Կիլիկիայի պարմության Լուսինյան ժամանակաշրջանի վերաբերյալ /Էջ 210-224/, որպեսզի հեղինակն անդրադառնում է Կիլիկիայի թագավորական իշխանության անցմանը Լուսինյան հարստության պայագրարներին, Գի Լուսինյանի կարիերային Բյուզանդիայում, մամլուկների և եվրոպական իշխողների հետ նրա փոխհարաբերություններին, ասպետական գրականության մեջ նրա հիշարակությանը, հայ պարմագրության մեջ Կոստանդինի և Գի անունների շփոթին /Էջ 214-215/: Կ. Մութաֆյանը ներկայացնում է Կոստանդին Ա.-ի և Բ.-ի կառավարման ժամանակաշրջանը (1344-1363, 1364-1373), անդրադառնում Պեդրոս Ա. Կիպրացու հավակնություններին, Մարի Կոնիկոսցու գործունեությանը և Լևոն Ե.-ի թագավորությանը, ձերբակալությանն ու արքունիքի՝ դեպի եվրոպական փառքեր երկրներ կարարած նրա ուխտագնացություններին, կյանքի վերջին փառիներին, պարմագրության մեջ թափանցած թագավորության անկմանը վերաբերող լեզնեղներին, Կիլիկիայի հետագա ճակարագրին²³: Կիլիկիայի թագավորական ընտանիքի անդամների ինքնության պարզման գործում հեղինակը փրկաշանորեն քարպագրել է բոլոր սկզբնաղբյուրները, մանավանդ Վենետիկի թ. 710 Յայսմաուրքի լուսանցագրություններն ու ժամանակագրություններին և հիշարակարանների փրկելությունները, որոնք արագացվել են նաև ծագումնաբանական ցանկերում:

Գրքի հաջորդ բաժինը նվիրված է Ե.-ԺԲ. դարերի Նախասրանի նախարարական փրկերին և թագավորություններին /Էջ 225-368/, որպեսզի հեղինակն սկզբում անդրադառնում է ծագումնաբանության հետազոտման համար կարևոր գործիքներին. հայ պարմագրության, վիմագրության, խնդրին վերաբերող գրականության հիմնական հրապա-

23 Այսպեսզի հեղինակի ուշադրությունից վրիպել է Գ. Ֆ. Թինոյան, *Կիլիկիոյ Նաոյց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ.*, Եր. 2011 աշխատությունը:

րակություններին, հայկական թվականի վերծանման յուրահարկություններին, անձնանունների օգտագործման հաճախականությանը և կարգին, նյութին վերաբերող հիմնական միջնադարյան տերմինների ընկալման յուրահարկություններին: Բաժնի համար մուրք է ծառայում հայ ազնվականությանը նվիրված հարվածը, որտեղ հեղինակն անդրադառնում է հայկական ավանդական ավարտաբիրությանը, միջնադարյան ազնվականական ընտանիքների անուններն ավանդող հիմնական սկզբնաղբյուրներին, հայ ազնվականության հարկանիշներին, Կոստանդին Շիրանաձնի «Արարողությունների» գրքում առկա՝ Ժ. դարի Մեծ Հայքի ազնվականության վերնախավի դերի բացահայտմանը: Նեղինակն անդրադառնում է քաղաքացիական (նախարար, իշխան, թագադիր, քեր, զինվորական (գորավար, ասպետ, հրամանավար, սպարապետ) փոխառություններին՝ շեշտադրելով սպարապետի պաշտոնի առկայության փաստը Ե.-ԺԱ. դդ. սկզբնաղբյուրներում: Այնուհետև մանրամասնում է հիմնական նախարարական ընտանիքների (Մամիկոնյաններ կամ Թոմարիկյաններ, Կամսարականներ, Արծրունիներ, Օրբելիներ)²⁴ և տոհմերի դերի ու նրանցից շարքերի հաջողությունների մասին բյուզանդական ծառայության մեջ: Առանձին հեղափոխության են արժանացել Պախլավունիները, որոնց հեղինակը հակված է համարել Կամսարականների շարունակություն: Խոսվում է տոհմի Անիական, Բջնիական, Նասանի և Եգիպտոսի ճյուղերի մասին²⁵: Անդրադառնում է նաև Եգիպտոսի Սպիտակ վանքի հայերեն արձանագրություններին²⁶ և ֆաթիմյան վեզիր Վահրամի գործունեությանը: «Բագրատունիները և նրանց պետությունը» հարվածում հեղինակն անդրադառնում է այդ ընտանիքի ծագմանը, Արշակունյաց և հեղափոխության շրջանի գործունեությանը, աղբյուրներում վկայված նրանց փոխառություններին (ասպետ, թագադիր, թագապահ, մարզպան Հայոց, կյուրոպաղատ, սպարապետ, պարթիկ, իշխանաց իշխան, մագիստրոս, թագավոր, արքայից արքա, շահնշահ), ընտանիքի տարբեր ճյուղերին (Անգեղ տուն, Սպեր, Կոզովիտ), Հայոց և Վրաց Բագրատունիների միասնական ընտանիքի երկփեղկմանը²⁷, Արաբական խալիֆայթում Բագրատունիների խաղացած դերին, նրանց հաստատմանը Շիրակում, Աշոցքում և Տայքում, Բագրատունյաց թագավորության պատմությանը, թագավորության մայրաքաղաքներին (Բագարան, Կարս, Անի), Նայաստանի և Կովկասի մյուս իշխանական ընտանիքների հետ նրանց ամուսնական կապերին, թագավորության անկմանը և նրանց հետագա ճակատագրին,

24 Այս շարքում չի բացարձակվում Օրբելիների առկայությունը, որոնք մինչև 1178 թ. մաս էին կազմում վրաց ազնվականության:

25 Չի բացարձակվում, թե Վեստ Մարգիսը, որը կոչվում է նաև Հայկազունի ինչպես է հայտնվում Նասանյան Պախլավունիների մեջ, քանի որ Գրիգոր Մագիստրոսի դստեր հետ ամուսնությունը կարծում են բավարար հիմք չէ նման եզրակացության համար: Արդյոք Հայկազունիները, որոնք հիշատակվում են ԺԱ.-ԺԳ. դդ. սկզբնաղբյուրներում, առանձին իշխանական ընտանիք չէին:

26 Պարսի առանձնակի մատենանշել, որ Կ. Մուրաֆյանն իր բարեկամ, լուսանկարիչ Նարայ Խաչերյանի միջոցով ձեռք է բերել այդ վանքի հայերեն արձանագրությունների լուսանկարները և դրանք օգտագործել իր աշխատանքում /R 227/:

27 Այստեղ /էջ 261/ հեղինակը, կարծում են, պարսի անդրադառնալով նաև վրացագիտության մեջ տարածված փոխառություններին (որն օրինակ **М. Д. Лордкипанидзе, История и повествование о Багратионах, Тбилиси 1979** եւն.):

Կարսի և Լոռիի թագավորություններին²⁸, Մաժնաբերդի, Նորբերդի ճյուղերին, Տարունի Բագրատունիների պարմությանն ու Բյուզանդիայում նրանց խաղացած դերին /Էջ 257-273/: Այնուհետև հեղինակն անցնում է ժամանակի հայկական մյուս թագավորությունների պարմությանը. Արծրունիների պետության հիմնադրմանն ու անկմանը, ազնվականական այդ ընտանիքի հետագա ճակատագրին, Արցախի թագավորություններին, ճշտելով Ազվանը հասկացության աշխարհագրական սահմանները, Դիզակի, Փառխուսի ազնվականական քրեի պարմությունն ու ճյուղագրությունը /Էջ 274-280, G 20-24/²⁹: Նեղինակն առանձին ներկայացնում է նաև Զաքարյան Նայասարանի իշխանությունները. անդրադառնում Զաքարյան իշխանական փամբ³⁰ սկզբնաղբյուրներում քրվող թագավորական փիլոսոփաներին, քննում է նրանց կապը Արծրունիների և Բագրատունիների հետ, անդրադառնում վերջիններիս էթնիկական ծագման խնդիրներին: Շեշտելով, որ մինչև Ավագ Սարգիս այս ընտանիքի մասին սկզբնաղբյուրներում որևէ վկայություն չի պահպանվել, նա Վրաստանում Զաքարյանների դերի կորույթ բարձրացումը արդարացիորեն կապում է Օրբելյանների ապստամբության ճնշումից հետո³¹ Մեծ Սարգսի բարձրացման հետ, անդրադառնում է վերջինիս ժառանգների մասին սկզբնաղբյուրների վկայություններին, Զաքարե և Իվանե Զաքարյանների հետնորդներին, նրանց ստորականներ՝ Ամբերդի Վաչուրյաններին և Բազմայրի Խոռոսայաններին /Էջ 281-295/: Աշխարհում առանձին ներկայացված են նաև Գուգարքի իշխանությունները. Գագի Վահրամյանները, Ախալցխյանի և Սամցխեի (Ջաղելի) իշխանական ընտանիքները, Մահկանաբերդի Սադունյանները, Դսեղի Մամիկոնյանները, Նաղպարի և Սանահինի արձանագրություններում հիշատակվող Ուրանյանները /Էջ 296-302/: ԺԳ.-ԺԴ. դդ. Բուն Նայասարանի իշխանություններից անդրադառնում է Սյունիքի Օրբելյաններին (Տարսայիձի, Բուրթելի ճյուղերով) և Պռոշյաններին, Արցախի. Ջալալյաններին, Վախթանգյաններին, Դովյաններին /Էջ 303-324/:

Անդրադառնալով ԺԲ.-ԺԴ. դդ. հայկական թագավորական հարստություններին, հեղինակը շեշտադրում է ազնվական ընտանիքների սերնդաբանության հետազոտ-

28 Կ.Մուրաֆյանը կասկածանքով է վերաբերում նրանց վերագրված պղնձե դրամին /Էջ 270/: Վերջերս հայտնաբերվել է նաև արծաթե մեկ այլ արաբալարա դրամ, որը դրամագետներ Ա. Նակոբյանը (Մոսկվա) և Ա. Վարդանյանը (Երևան) կրկին վերագրում են Լոռու Կյուրիկյաններին /տե՛ս A donative silver coin of Kūrike II of Tashir-Dzoraget (Lori). – Revue Numismatique, 2013, հանձնված է պապարտության/:

29 Պիտի նշել, որ դրանք բավական քաղաքներում են Ա. Նակոբյանի կազմած ճյուղագրությունից (տե՛ս «Խաչեն-Խոխանաբերդի ամրոցը և նրա իշխանավորին Թ.-ԺԳ. դարերում (քննական ակնարկ)»): *Նախնա Անսորեսայ*, 2010, սյուն 71-170):

30 Նրանց ինքնության խնդիրն Վրաց թագավորության քաղաքական կյանքում անդրադարձել է Շ. Մեսխիան, *Ներքին քաղաքական իրադրությունը և պետական կարգը ԺԲ դարի Վրաստանում*, Թբիլիսի, 1979, էջ 159-319, (վրացերեն): Արժեք խնդրի արժարժման ժամանակ օգտագործել նաև Ն. Մարգարյանի (Autour des hypothèses de l'origine Kurde de la maison princière arménienne des Zakarides. – In: "Iran & Caucasus", vol. I, Tehran, 1997, p. 25-46) աշխատությունը: Ափսոսանքով պիտի նշել, որ ԺԱ-ԺԳ. դդ. Բուն Նայասարանի իշխանական ընտանիքների մասին 1996 թ. Ն. Մարգարյանի պաշտպանած դոկտորական արեւմտագիտությունը ցայսօր լույս չբեռնավ:

31 Ընդ որում Կ.Մուրաֆյանը փայլա է երկբայական 1177/78 թվականը /մի այլ տեղում՝ 1177 թ./ չնկատելով, որ ապստամբության թվականի ճշգրտման գործում կարեւոր է Ն. Մարգարյանի մենագրությունը (*Նյութաւային Նայասարանի և Վրաստանի ԺԲ. դարի պատմության մի քանի հարցեր*):

ման գործիքների՝ սկզբնաղբյուրների, ազգակցության մերձավորության հաշվման և ամուսնական չհասության կանոնական սկզբունքների, գիտական գրականության մեջ շրջանառվող տերմին-եզերի կարևորությունը, որից հետո անցնում է Ռուբինյանների, Պահլավունիների³², Նեթումյանների և նրանց ճյուղերի գործունեությանը, ազգակցական կապերին, ունեցած փափոքներին /304-364/: Նեղինակն ընդունելի մտքեցմամբ, Նեթումյանների փարբեր ճյուղերը ներկայացնում է ըստ նրանց ամբոցների (Լամբրոն³³, Կոմարդիաս, Պապենոն, Ճանճի, Նդիր³⁴, Կոռիկոս, Կանչի³⁵, Սարվանդիբար, Ասկուրաս), չի մոռանում նաև Մերձեփրապյան, Տարոնի, Աբղարիբ Արծրունու իշխանությունները /Էջ 365-368/: Թռուցիկ անդրադառնում է Կիլիկիայի հայկական պետության ազնվական ընտանիքների (հարկապես Ռուբինյանների և Նեթումյանների) միջև հաստատված ամուսնական կապերին և դրանց պարճառներին (Էջ 369 և T1):

Այնուհետև, հեղինակը ներկայացնում է ԺԲ. դարի Խաչակրաց Արևելքի պետությունների հայազգի իշխանուհիներին և թագուհիներին, միջազգային քաղաքական կյանքում նրանց կարգադրություններին /Էջ 371-381, T1/: Անցնելով ԺԳ.-ԺԴ. դարերին՝ Կ. Մութաֆյանը ներկայացնում է Կիլիկիայի Նայոց թագավորության քայլերն ամուսնական դիվանագիտության ասպարեզում՝ Անտիոք-Տրիպոլիի դքսության, Երուսաղեմի, Կիպրոսի թագավորությունների և Լուսինյան ընտանիքի հետ: Անդրադառնում է նաև խաչակրաց Արևելքի մի շարք նշանավոր ընտանիքների (Իբելիներ, Տորոններ և Մոնֆորներ, Բույոններ, Պիքիյներ, Մանսկներ, T 2-3, G 77-82) հետ ամուսնական կապերին և դրանց քաղաքական ծախսերին, շեշտադրելով հայ-բյուզանդական (G 83) և հայ-մոնղոլական (T 4) ամուսնությունների քաղաքագիտական նշանակությունը /Էջ 382-408/:

Աշխարհիկ հաստատությունները բաժնում /Էջ 409-442/ հեղինակն անդրադառնում է Նայասարան, Փոքր Նայասարան և այլ տերմին-եզրույթներին, որոնցով միջնադարյան բազմալեզու սկզբնաղբյուրներում բնութագրվում է Կիլիկիան, հստակեցնում է դրանց նշանակությունը /Էջ 410-413/: Քննարկում է թագավորական իշխանության լեգիտիմության բաղկացուցիչները՝ իրավական հուշարձանները, թագադրությունն ու արքունիքի դերակատարությունը, թագավորական փափոքները (հարկապես՝ Ամենայն Նայոց թագավոր), անդրադառնում է թագավորների օրինական ժառանգությանը, թագավորների հերթականության պարմագրական ամրագրմանը, թագուհիների ու խնամակալ-

32 Առանձնակի քննարկում է սկզբնաղբյուրների վկայությունները Ներսես Շնորհալու ծնողների վերաբերյալ և հանգում նոր արդյունքի /Էջ 334-335, G 40/: Բացի հղված գրականությունից, Պահլավունիների համար կարելի է օգտագործել նաև **Վ. Վարդանյան, Պահլավունիները Նայոց պետականության և հոգևոր անադարության պահպաններ**, Եր. 2008 աշխատությունը:

33 Նեղինակն սկզբնաղբյուրների լիարժեք բացահայտմամբ, պարմագրության առջև արդարացնում է պեղարական դավաճանության մեջ անհարկի մեղադրված, Կեռան թագուհու հայր՝ Նեթում Լամբրոնացուն /Էջ 342/:

34 Այսպես Կ. Մութաֆյանը ճշտում է Նեթում Ա.-ի ժամանակակից Կոստանդինոպոլիս Նդիրցու տեղը Ծննդաբանական ծառում /Էջ 354-255, G 36/՝ հերքելով Լ. Տեր-Պետրոսյանին (Խաչակիրները և հայերը, հր. Բ, Էջ 429-433):

35 Նեղինակը ցույց է տալիս, որ Լեոն Դ.-ի մայր Զաբելը ոչ թե Նեթում Կոռիկոսցու, այլ նրա եղբայր, Կանչի փեր Օշինի դուստրն է /Էջ 195, 360, G 34/:

ների ինստիտուտներին /Էջ 414-434/, Բագրատունյաց ու Ռուբինյան, Վրացական³⁶ արքունիքում շրջանառության մեջ եղած պաշտոններին և դրանք զբաղացնող անձնավորությունների ցանկերին/Էջ 435-441/:

Արարաքին հարաբերությունները բաժնում խոսվում է երկրի պաշտպանության, դիվանագիտության և առևտրի մասին /Էջ 442-474/, անդրադառնում է Նայասարանի ռազմական ավանդույթներին, զինարվեստին և մարտունակությանը, Կիլիկիայի և Վրաստանի հիմնական զինվորական պաշտոններին³⁷ և դրանց ղեկավարներին: Կազմում է Կիլիկիայի Նայոց թագավորության դիվանագիտական միսիաների և երկրի արարաքին հարաբերությունները կարգավորող գրասենյակի պաշտոնության ցանկեր: Բննարկում է Կիլիկիայի կնքած խաղաղության պայմանագրերի փաստակները ըստ պետությունների (Անտիոք, Բեզանդիա, մոնղոլներ³⁸, մամլուկներ, Եփրատ), դրանց ձևաչափերը, կարգավորման խնդիրները /Էջ 253-461/: Այսպես, մեր կարծիքով, կարելի էր համեմատել կամ գուցաևեռ անցկացնել Կիլիկիայի ջանքեր և Վրաստանի միջոցառությունները-ձեռնարկները³⁹ պաշտոնների միջև, որոնք զբաղեցնում էր երկրում թագավորից հետո երկրորդ մարդը՝ իբրև կանոն հոգևորական. Կիլիկյան Նայասարանում հիմնականում Սսի արքեպիսկոպոսը, իսկ Վրաստանում երբեմն՝ կաթողիկոսը: Առևտրի զարգացման հիմնական կենտրոնները Կիլիկիայում նավահանգստային կամ վաճառաչան քաղաքներն ու ամրոցներն էին, որոնց նշանակությունը պարզաբանելուց հետո, անդրադառնում է երկրի քրիստոնեական վիճակին. Վենեթիկի, Ճենովայի, Արագոնի և Սիցիլիայի հետ ունեցած առևտրական կապերին, եվրոպական առևտրական քարտեզներում (պորտուլան) Կիլիկիայի ներգրավվածությանը, Ասիայի և Եվրոպայի միջև Կիլիկյան և բուն Նայասարանի առևտրի զբաղեցրած դերին, այդ ճանապարհների վրա Այսրկովկասի հայ վաճառականների (Նոնեց, Ումեկ և այլք) դերակատարությանը /Էջ 462-474/:

Նաջոթը մասը նվիրված է հոգևոր հաստատություններին կամ վարչությանը /Էջ 475-515/: Անցնելով հայկական կաթողիկոսական աթոռի սյուրեմանը, ընդգծում է, որ պետականության կորստից հետո, այն իր ձեռքում է պահել նաև քաղաքական իշխանությունը, կաթողիկոսական նստավայրը փրկափութելով երկրի վարչական կենտրոն: Նայսին է, որ Օրմանյանի “Ազգապատմություն”-ի հրապարակումից հետո, հիշյալ խնդիրները մասնագիտական քննարկման չեն արժանացել: Այդ իսկ պարզաբանված նորմի անդրադարձը կաթողիկոսական իշխանության, ձեռնադրման, եկեղեցական պաշտոնների և քրիստոնեների քրման խնդիրներին, պարմաբանների միջավայրում սրում է դրանց

36 Վրաց արքունիքի պաշտոններին ավելի մանրամասնորեն անդրադառնում է Շ. Մեսիսյան, փնտռելով մենագրություն, էջ 79-158: Պիտի նկարի ունենալ, որ պահպանվել է վրաց արքունիքում գոյություն ունեցած պաշտոնների ցանկը և դրանք զբաղեցնող պաշտոնյաների իրավական դիրքն ու գործունեության կանոնակարգը:

37 Տե՛ս նաև նույն փոխում:

38 Նեղինակի ուշադրությունից վրիպել է **Bayarsaikhan D., The Mongols and the Armenians (1220-1335)**, Brill, Leiden, 2011 մենագրությունը:

39 Տե՛ս նույն փոխում, էջ 100-102: Վրաց պարմագրության մեջ այդ ինստիտուտն անվանում է նաև վեզիրություն:

անդրադառնալու կամ նորովի մեկնաբանելու ձգտումը /էջ 476-485/: Կ. Մութաֆյանը բերում է ԺԲ.-ԺԴ. դդ. փնդի ունեցած եկեղեցական ժողովների ցանկը /էջ 485/: Նա ներկայացնում է Նոմկլայում և Սաում կաթողիկոսական ընտրության կարգը⁴⁰ և օրինաչափությունները, կաթողիկոսական աթոռին բազմաժողով հաջորդականությունը և պապական իրադարձություններով պայմանավորված փոփոխությունները /էջ 492-494/, ապա՝ հեղինակն անդրադառնում է Աղվանից և Աղթամարի կաթողիկոսների ընտրության առանձնահատկություններին, հարկապես ԺԴ. դ. հանդես եկած նոր միություններին՝ Կիլիկիոյ Տան առաջացմանը: Տալիս է եկեղեցական աստիճանակարգի կանոնական հիմքերը, արքեպիսկոպոսական իշխանության յուրահատկությունները, ճշգրտում կաթողիկոսական ցանկերն⁴¹ ու անդրադառնում դրանք սրբագրելու կարևորությանը /էջ 485-499/: Հերետիկոս իրենից առաջ գրած հեղինակներին, Կ. Մութաֆյանը ԺԳ. դ. վերջով է թվագրում կաթողիկոսական ընտրության նոր մեխանիզմը /էջ 486/, ուր հիմնական դերը վերապահվում էր Բջնիի, Նաղբարի, Թաղեի և Տաթևի արքեպիսկոպոսներին⁴²: Այսպես կարելի էր նաև անդրադառնալ ԺԲ. դ. Աղվանից կաթողիկոսության նոր կշռի ձևափոխմանը, որով էլ պայմանավորված էր վերջին Կյուրիկյանների թագադրումը և Բարսեղ Ա կաթողիկոսի օծումը նրանց ձեռքով⁴³: Հակաթոռ կաթողիկոսարանների իշխանությունը հարվածում Կ. Մութաֆյանն անդրադառնում է Աղթամարի կաթողիկոսության հիմնադրմանը, այդ աթոռի գահակալներին և նրանցից մի քանիսի կողմից սեփականաձև «Ամենայն Հայոց» փոխադասին, Նոմկլայի և Սսի հետ նրանց փոխհարաբերություններին, ԺԲ. դարի վերջին Բարսեղ Ամենույն կողմից Բագրատունյաց հնամենի մայրաքաղաքում կաթողիկոսական իշխանության վերականգնման փորձին (1195 թ.), Անանիայի կողմից Իկոնիայի սուլթանության փրկած ընդհանուր կաթողիկոսական աթոռի սրբեղծմանը, որն ըստ հեղինակի Կ. Պոլսում սրբեղծվելիք պարբերության նախարկի էր⁴⁴, Երուսաղեմի եպիսկոպոսությունը⁴⁵ պարբերության վերածվելու պարմությանը /էջ 500-509/: Կարելի էր անդրադառնալ նաև Աղթամարի կաթողիկոսության իշխանության և Հայոց եկեղեցու նվիրապետական աստիճանակարգում պարունկության ինստիտուտի խաղացած դերին, որն ուղղակիորեն կապվում է ավարական հողատիրության և լեզվաբանության խնդրի հետ⁴⁶: Հաջորդ հարվածում հեղինակն անդրադառնում է պետություն և եկեղեցի փոխհարաբերություններին: Ջրբաժան անցկացնելով մինչ Լևոն Մեծագործ և նրանից հետո սրբեղծված փոխա-

40 Նեղինակը նկատում է, որ Սսի Մաշտոցում այն նման է ատրական ավանդությանը /էջ 492, ծան. 20/:

41 Այդ ցանկերից նա իրավացիորեն դուրս է բերում Պողոս անուկով եմբաղդյալ կաթողիկոսի անունը / էջ 495/:

42 Ա. Այվազյանը ԺԸ. դարով է թվագրում այդ կանոնակարգությունը. փնդ *Հայոց եկեղեցին ԺԸ դարի հայ ազատագրական շարժման բաղադրիչներում*, Եր. 2003, էջ 17-27:

43 Տե՛ս *Մարտիրոս Ուռուսեցի, Ժամանակագրություն*, Եր., 1991, էջ 238, 248:

44 Կարծում եմ, արհեստական է այդ երկու իրադարձությունների միջև զուգահեռի անցկացումը:

45 Նեղինակը սխալ է համարում Մ. Չամչյանի այն փեսակետը, ըստ որի Երուսաղեմի հայկական պարբերության հոջակումը թվագրվում է 1311 թ. /էջ 508/:

46 Տե՛ս *A. Bozoyan, Le système hiérarchique de l'Église Arménienne à l'Époque des Mongols. – Bazmavep, 2010, 3-4, p. 526-527.*

րաբերությունների միջև, Կ.Մութաֆյանն անդրադառնում է հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միջև մղվող պայքարին⁴⁷, Սսի արքեպիսկոպոսի հարյուր հեղինակությամբ: Նեղինակն անդրադառնում է Կոստանդին Բարձրաբերդցու ժամանակ եկեղեցու և պետության համերաշխությանը, որին գալիս է փոխարինելու Նեթում Բ.-ի որդեգրած միաբարական թաղաքականությունը, խոսվում է այդ թաղաքականությամբ Կոստանդին Բ. կաթողիկոսի ընդիմության, ձերբակալության, ինչպես նաև կաթողիկոսյան դեմ պայքարի և Կիլիկիայի թաղաքական կյանքում դավանաբանական պայքարի հետագոյման կարևորության մասին /էջ 510-515/: Ըստ երևույթին, մինչև Լևոն Մեծագործի իշխանության տարիները, հայոց կաթողիկոսները գերադասում էին իրենց աթոռը պահպանել մուսուլմանական պետությունների տարածքում (Նալեպի ամիրայություն, Այյուբյան սուլթանություն ևն.), ամեն գնով հակառակվում էին հայրմովլ որևէ հայկական իշխանության սահմաններից ներս, որպեսզի չջլարեն հայկական Էկումենիկ զանազան իշխանությունների ուժերը, միմյանց դեմ չհանեն նրանց /էջ 518/⁴⁸: Կ.Մութաֆյանն ավելի մեծ համարեքստում կարող էր անդրադառնալ պետական և կաթողիկոսական իշխանությունների պայքարին, եթե խնդիրը կապեր Կիլիկիայի ներքին թաղաքական զարգացումների հետ, կամ վեր հաներ կաթողիկոսներին տրվող «խալիֆ»⁴⁹ փառքոսի նշանակությունը և ընկալումը ԺԳ. դ. իսլամական աշխարհում /էջ 514, Կ.4/:

Գրքի հաջորդ հարվածը նվիրված է կրոնական թաղաքականությանը (եկեղեցական դիվանագիտություն), ուր ներկայացվում է Մերձավոր Արևելքի (Լևոնի) կրոնական խայրաբեկությունը, խոսվում է Նայոց Առաքելական եկեղեցու, իսլամական աշխարհի հետ նրա փոխհարաբերությունների մասին: Նեղինակն անդրադառնում է տարածաշրջանում հակոբիկ և նեստորական եկեղեցիների ներկայությանը, հայ-քաղկեդոնականների դեմ մղվող պայքարին, և դրա ծիսական և տոմարական (Շռագարիկ) դրսևորումներին, հայերի և խաչակիրների ռազմական բախումներին /էջ 516-520/: Կարծում եմ աշխատանքն ավելի կշահեր, եթե ներկայացվեին նաև միակամականները (հետագայում՝ մարոնիներ), ինչպես նաև տարածաշրջանի մուսուլման դրուզները, հեթանոսներն ու աղանդավորները (արևորդիներ ևն.): Նեպաբբիք գնահատականների են արժանանում Մերձավոր Արևելքի հիմնական քրիստոնեական թաղաքական ուժերը. Նեղինակն «խմպերիալիս» կաթողիկոսներից և հույներից առանձնացնում է «ազգայնական» հայերին և հակոբիկ ասորիներին /էջ 520/: Այս դեպքում ո՞ր չափանիշներով պիտի առանձնացնել հակոբիկ և նեստորական ասորիներին: Կարելի էր անդրադառնալ

47 Այսպես, անշուշտ, հեպաբբիք է Յակոբի փոփոխության քննարկումը /էջ 513/: Պետության և եկեղեցու հակամարտության /հմմտ. էջ 514, ծան. 7/ հետազոտման փաստկյուղից անգնահատելի են նաև Սրեփանոս Օրբելյանի վկայությունները, որպեսզի ներկայացվում են թագավորական իշխանության ծայրահեղ մեղադրանքներն ընդդեմ Նոմկլայի կաթողիկոսարանի (տե՛ս «Սրեփանոս Սյունեաց եպիսկոպոսի Պատմություն Տանն Սիսական», ի յոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկուա, 1861, գլ. ԿԸ, էջ 322):

48 Հմմտ. **Ա.Բոգոյան**, *Բյուզանդիայի ...*, էջ 219-220:

49 Այդ փերմին առաջին անգամ օգտագործված է Գրիգոր Դ. Տղա կաթողիկոսի համար Բախադդին Իբն Շադադի երկում, թեպետ պակաս կարևոր չէ նաև Ջովելյնիի փոփոխությունը, Վրաց թագավորի կողմից կաթողիկոսին (վրաց) Բաղդադում նստեցնելու ծրագրի մասին (տե՛ս **З. М. Буниатов**, *Государство Хорезмшахов-Ануштегинидов*, 1097-1231, М. 1986, с. 166):

“Թուղթ Ընդհանրական”-ի այն մարբին, որ հայ զինվորները նվիրումով պետք է ծառայեն նույնիսկ մուսուլմանական բանակում⁵⁰: Վրացական եկեղեցուն դեմադրեմ հարվածում ներկայացնում է Դավիթ Շինարարի ժամանակներում հայ-վրացական եկեղեցադավանական փոխհարաբերությունները և հայերի դերը Վրաստանում, Ջաքարյան եղբայրների դավանական պարկանելությունը, Ջաքարիայի դիմումի համաձայն Կիլիկիայում հրավիրված ժողովի արդյունքները, Թամար թագուհուց հետո հայ-վրացական դավանական փոխհարաբերությունները /էջ 521-523/: 1197 թ. Ծռագարկի մասին իր արժեքը դեռևս չի կորցրել Լ. Մելիքսեթ-Բեկի հոդվածը⁵¹: Նեստորական եկեղեցու և նրա նկարմար Նայոց եկեղեցու վերաբերմունքի, մոնղոլական նվաճումների դարաշրջանում երկու եկեղեցիների փոխհարաբերությունների շուրջ խոսվում է հաջորդ հարվածում /էջ 524-525/: Ավելի հարուստ են փոխհարաբերությունները ասորի հակորիկ եկեղեցու հետ. ըստ Գրիգոր Մագիստրոսի նամակների՝ ներկայացված է երկու եկեղեցիների համարեղ պայքարն ընդդեմ պավլիկյանների և թոնդրակեցիների: Նովիանոս Ժ. բար Շուշան կաթողիկոսի հետ նամակագրության շրջանակում հեղինակը բնութագրում է Գեորգ Վերադիպողին (Լոռեցի) վերագրված նամակում առկա դավանաբանական խնդիրները: ԺԲ. դարում հայ-հակորիկյան փոխհարաբերությունների շրջանակում անդրադառնում է հայկական (ինչպես նաև հայկական ծագում ունեցող Եդեսիայի իշխանների) իշխանությունների կողմից ասորական վանքերի թալանին և յուրացումին⁵², Գրիգոր Գ.-ի և Մմբեջի եպիսկոպոս բար Անդրեասի հակաճառությանը, Միքայել և Անանուս Ասորիների կողմից Նայոց եկեղեցուն ներկայացրած մեղադրանքին, Թորոս Բ իշխանի կողմից Կիլիկիային Կրեդալա գործում Անավարզայի եպիսկոպոս Աթանասի օգնությանը, Դիոնիսիոս բար-Սալիբու դավանական դիրքորոշմանը, Ներսես Շնորհալու և ասորի վարդապետ Նակորի նամակագրությանը (1150 թ.), Շնորհալու կողմից ասորական մարտի-

50 «Ընդհանրական թուղթը Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ», Երուսաղէմ, 1871, էջ 77-78: Այս առումով հետաքրքիր վկայություններ են հաղորդում արաբագիր հեղինակները ԺԱ.-ԺԲ. դդ. Եգիպտոսի, Նալայի և Մոսուլի, ինչպես նաև Մերձսփոր Արեւելքի մուսուլմանական այլ պետությունների հայ վեզիրների, զինվորականների և կառավարիչների հավատարիմ ծառայության մասին: Նայագիւրական գրականության մեջ նրանցից մի քանիսի գործունեությանն անդրադարձել են. **Ա. Ալաօյաննան**, *Արաբական միացեալ Նաւրասպետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը* (սկզբէն մինչև մեր օրերը), Գահիրէ, 1960, էջ 16-47, Արաբական աղբյուրները Նայաստանի և հարևան երկրների մասին /կազմեց Թ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 220-221, 222 նն., Պ. Սապաղեան, Նայագիւ Աթաբէկ և Մոսուլի սուլթան Պարթ Էր Տին Լալու. - Նայագեան Նայագիւրական Նաղէա, հր. Թ. Պէլքոյ, 1981, էջ 121-130, Կրէն Մ. Միմասեան “Աղապէկ Շապատոյ Տին Թուրքի ալ Արմանի կառավարիչ Նալայի (1216-1233)” արաբերէն լեզվով զեկուցումը՝ ընթերցված Նալայում, Դամասկոսի Ֆրանսիական կենտրոնի կողմից կազմակերպված “Նայերը Պիլապ Ալ Շամի մէջ 10-15-րդ դարերուն” գիտաժողովի ընթացքում:

51 **Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ**, “О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу кривой паски (Вокруг старого Туглиса)”, *Известия КИВИ*, т. III, Тифлис, 1925, с. 49-60 (վերահրապարակված՝ **Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ**, *Источниковедческие заметки / составил и редактировал Л. М. Мурадян*, Ер. 2010, с. 99-113): Խնդրի հետ է կապվում նաև գրականության մեջ թափանցած շփոթը՝ Գրիգոր Տուրետոյու և Գրիգոր Նաղբարեցու նույնության մասին, Կրէն **Ա. Բոգոնան**, «Գրիգոր Տուրետոյի վարդապետին վերաբերող վկայությունների քննություն», «Շողակաթ» եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդէս, Սյրանալու, 1995, էջ 55 - 62:

52 Այս փոփոխությունները թերս կարող են բազմալեզու սկզբնաղբյուրների համեմատական քննության, բանի որ վկայված են միայն ասորերեն բնագրերում:

նագրական երկերի թարգմանությանը⁵³: Նեղինակը ճշգրտում է Կիլիկիայում ասորիներին պարկանող թեմերի բանակը, ներկայացնում բյուզանդական եկեղեցու հետ Ներսես Շնորհալու և Միքայել Ասորու փոխհարաբերությունները, Նուսիկյան (կամ Ուսկյան) հերձվածի դեմ պայքարը⁵⁴, Միքայել Ասորու և Գրիգոր Դ.-ի անձնական փոխհարաբերությունները, Թեոդորոս բար Վահբունի և Միքայել Ասորու հակամարտության պարփակումները, Միքայել Ասորու հետնորդներ Նովհաննես ԺԴ.-ի և Իզնապրիոս Բ.-ի գործունեությունը, Վարդանի կողմից ասորերեն երկերի թարգմանությունը, Ասորի պարիսրաբների Կիլիկյան նստավայրերը, հակոբիկյան պարիսրաբության վիճակը ԺԴ. դարում /էջ 526-542/: Կարծում եմ, մինչ աստիճանական խնդիրների համակողմանի լուսաբանումը, պետք էր ձեռնպահ մնալ այն դրույթից, թե հայոց և ասորի եկեղեցիների հակամարտության հիմքերից մեկը Նուսիկյան և Սևերական հակոբյան մոսթուգումներն են /էջ 527/, մանավանդ որ նշվում է, թե հայոց եկեղեցու դեմ ասորիների թշնամանքը պայմանավորված էր հայերի կողմից հակոբիկյան թեմերի զավթմամբ /էջ 528/: Կարելի էր ավելի խորացնել այն միտքը, որ մի կողմից ասորիները ձգտում էին ապահով ապրել Կիլիկիայի և Նյուսիսային Ասորիքի հայոց իշխանությունների փարածքում, մյուս կողմից էլ ընդվզում էին՝ ավելի վեր դասելով իրենց եկեղեցու դավանաբանությունը /էջ 528-530/: Գեորգ Վերադիստոյի վերագրված նամակում, բացի հայ-ասորական բանակցություններում արձարված ծիսադավանական հայրնի խնդիրներից, քննարկվում է նաև «խաչ առնելու»⁵⁵ խնդիրը: Նկատարելի է, որ այդ ծեսի մեջ ասորական կողմը փնտրել է հեթանոսական վերադարձներ, իսկ հայերն ընդ պահանջով վավերագրերում դրանք կապվում են Արամազդի կաղնու և մի շարք կենդանիների պաշտամունքի՝ մեզ դեռևս անհայտ պարկերացումների հետ⁵⁶: Ընդդեմ Բյուզանդիայի հատվածում քննարկում է մինչև ԺԲ. դարի կեսերը հայ-հունական բանավեճի փայլուն մակարդակները, հայոց կաթողիկոսարանի հալածանքները 1045-1065 թթ., կայսրության կողմից Պառիկավունիներին արված դավանական փոխզիջումը, բյուզանդական հակահայկական մաքսիմալական հուշարձանների դերը, Ալեքս Ա. Կոմնենոսի թշնամական վերաբերմունքը և հալածանքները, Նովհաննես Կոմնենոսի հայկական քաղաքականությունը, ներկայացնում է ԺԲ. դարի հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների հիմնական փուլերը, Նիկիայի կայսրերի և Պալեոլոգների դարաշրջանի եկեղեցական փոխհարաբերությունները /էջ 543-553/: Հայ քաղկեդոնականների դեմ պայքարը երբեմն միակող-

53 Կարելի էր անդրադառնալ նաև ասորի քահանա, թարգմանիչ Միքայելի ինքնությանը, հմմտ. **Ա.Բոգոյան**, «Այլազգի թարգմանիչները հայ մաթեմատիկոսության մեջ», *Լեռն Խաչիկյան*, 90, Երևան, 2010, էջ 278:

54 Այս ուղղության ներկայացուցիչները, կարծում եմ, որ ներկայացնում են Կ.Պոլսի եկեղեցու շահերը: Կարծում եմ «Բյուզանդիայի դիմաց» /էջ 526-542-553/ բաժնում առանձին պիսիի խոսվող հայոց եկեղեցուց հարվածված այդ շերտի մասին:

55 Գիրք Թեոդոս, Տիգրիս, 1901, էջ 345-346: Ասորական սկզբնաղբյուրն այն անվանում է «խաչերի և զանգակների մկրտություն», փնտ. **F. Nau**, *Lettre du patriarche Jacobite Jean X (1064 - 1073) au catholique Arménien Grégoire II (1065-1105)*. – *Revue de l'Orient Chrétien*, deuxième série, t. VII (XVII), 1912, p. 145-198, հարկապես՝ էջ 159-160, 185:

56 Խնդիրն անդրադարձ կա նաև Գրիգոր Մագիստրոսի թղթերում: Մեր կողմից հրապարակության է պարտադրվում Գեորգ Վերադիստոյի նամակի նոր հրապարակություն, որոշ պարզաբանումներով:

մանի է ներկայացված: Տեղիմակն այդ եզրի քակ ավելի հաճախ նկարի ունի կաթոլիկ-միարարների աշխարհը /էջ 554-587/: Նաշվի չեն առնված Փոքր Ասիայում, Նյուսիսային Ասորիքում և Վրաստանում դեռևս արաբական ռազմարշավների ժամանակների նախօրյակին ձևավորված, Կ.Պոլսից կախում ունեցող, քաղկեդոնական հայերի մշակութային միջավայրը⁵⁷: Նոմին դեմ հանդիման բաժնում Կ. Մուրաֆյանը քննարկման առարկա է դարձրել հայոց եկեղեցու և Նոմի փոխհարաբերություններին վերաբերող նյութերը. Դաշանց թղթից մինչև պապական եկեղեցու հետ ռեալ փոխհարաբերությունների վավերագրերը, խաչակրաց պետությունների և նվիրապետական համակարգի հետ շփումները, դավանական խնդիրներում կաթոլիկ եկեղեցու դիրքորոշման զարգացումները, այդ փոխհարաբերությունները քննարկող Ներսես Լամբրոնացու “առ Լեոն” թուղթը: Անդրադառնալով 1198-1289 թթ. Նոմի հետ փոխհարաբերություններին, քննում է կողմերի միջև փոխհարաբերությունների ճգնաժամային իրավիճակները, Վարդան Արևելացու պապասխանը պապական լեկաթին, մուրացիկ օրդենների և Դոմինիկ Արագոնցու միսիան, 1251 թ. Սսի ժողովի նյութերը, Մխիթար Սկևռացու դեսպանագնացությունը, Լեոն Բ.-ի դիրքորոշումը: Կ. Մուրաֆյանը քալլ առ քալլ հետևում է 1289-1307 թթ. Կիլիկիայում հռոմեական եկեղեցու ազդեցության ուժեղացման գործոններին, Ներում Բ. Փրանցիսկայան կրոնավորի գործունեությանը, 1292 թ. Ծաղապրկի հետ կապված հայոց եկեղեցու ներսում բռնկված բախմանը, Գևորգ Սկևռացու և հակալարին պայքարի հզորագույն հենակերպի (հապկապես Գլաձոր) դիրքորոշմանը, Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի մուրեցումներին: Ավինյոյան գերության շրջանում են քրեղի ունենում Սսի (1307) և Ադանայի (1316) ժողովները: Այս իրադարձությունների լույսի ներքո ավելի կարող են դառնում հակամիարարների պահանջներն ու Նովիանոս ԻԲ. պապի “հերձվածողների” դեմ հարձակումները: Փրանցիսկայան Զաքարիա արքեպիսկոպոսը և Նովիանոս Ծործորեցին հայոց և լարին եկեղեցիների հաշտեցման համար մշակում են նոր մուրեցումներ: Կ. Մուրաֆյանը փորձում է բացահայտել թագավորական իշխանության նկրտումները և 1332 թ. խաչակրության հիմնական խնդիրները: Այնուհետև հեղինակը ներկայացնում է Սսի և Ավինյոնի հակամարտության վերջին փուլը. Բենեդիկտ ԺԲ.-ի գահակալումը (1334-1342) և Նայոց եկեղեցուն ներկայացված 117 մեղադրանքների փաթեթը, Դանիել Թավրիզեցու և Ներսես Պալիանենցի դիրքորոշումը, Վարդան Սևելունցու հակալարին դիրքորոշումը⁵⁸, Կոնստանտին Զ. (1342-1352) և Ինոկենիոս Զ. պապերի պահանջները: Կ. Մուրաֆյանն անդրադառնում է նաև Կիլիկիայի կաթոլիկ եկեղեցու բոլոր եպիսկոպոսական աթոռներին, որոնք նրա կարծիքով սկզբում ուղղակիորեն ենթարկվում էին Անտիոքի լարին պարիարությանը, իսկ 1268 թ. հետո՝ պապությանը: Ներաբերքի է անդրադարձը Դրիմի հայկական գաղութին և այնպեղ հաստատված հայ միարարներին (Կաֆայի եպիսկոպոս Թադեոս, Մուրիսաթի արքեպիսկոպոս Առաքել ևն.)/էջ 554-598/:

57 Այս առումով անբավարար են օգտագործված հ. Ն. Ավինյանի (Սիմեոն Պրնհանանցի և իր թարգմանությունները վրացերեն, Վիեննա, 1951) և Լ. Մելիքսեթ-Բեկի (“Նայոց վարդապետը Նյուսիսային կողմանց” և նրանց ինքնությունը, Տփլիս, 1928, վրացերեն) երկերը:

58 Կ. Մուրաֆյանը, իրավացիորեն, անհավանական է համարում այս գործի նույնացումը Վարդան Այգեկցու հետ /էջ 584/:

Նաջորդ հապրվածը նվիրված է հայ մշակույթի կենտրոններին. հեղինակն անդրադառնում է բուն հայկական քաղաքների սափնական անկմանը և վանական կյանքի աշխուժացմանը, որոնք էլ հեղինակն դառնում են մշակութային կյանքի կարալիզացիաներ, անդրադառնում է նաև Նայասարանում, Վրաստանում, Իրանում, և մանավանդ Թուրքիայում և Ադրբեջանում այդ վանքերի բացահայտման և պահպանման այսօրվա խնդիրներին: Այնուհետև ներկայացնում է Եփրատյան մարզի և Կիլիկիայի (Մև լեռներ, Նոմկյա, Սիս, Տարսոն, Դրազարկ, Սկևռա, Գոներ, Ակներ ևն.), Կենտրոնական (Կամրջաձոր, Անի, Նոռմոս ևն.), Արևմտյան (Մեպուհ լեռ, Երզնկա ևն.), Նյուսիսային (Մանահին, Նաղբար, Գոշավանք ևն.), Արևելյան (Գանձասար, Գաձոր, Տաթև, Նախիջևան ևն.) և Նարավային (Աղթամար, Վարագ, Տարոն ևն.) Նայասարանի, ու օտար ավերում գրվող (Կիպրոս, Իսպիա, Դրիմ, Երուսաղեմ ևն.) վանական հաստատությունները, հարկապես Նոմկյայի, Սիս, գրչական կենտրոնների գործունեությունը /էջ 599-715/: Քաղաքների անկման և վանական կյանքի աշխուժացման ընթացքը բնութագրելիս կարելի էր նկատել, որ եպիսկոպոսական աթոռները հեղինակն արեղավորվում են վանքեր, խնդիր, որի դեմ պայքարում էին Նայոց կաթողիկոսները՝ սկսած Ներսես Շնորհալուց⁵⁹: Խոսելով Մև լեռների վանքերում հայկական մշակութային կյանքի մասին, կարելի էր անդրադառնալ նաև օտար և հայազգի թարգմանիչների համարող գործունեությանը իբրև Մեծավոր արևելյան վանական կյանքի կարևոր երևույթի⁶⁰:

Նախորդի վերջում հեղինակն ամփոփում է ողջ շարադրանքը, արվիս է աշխատանքում օգտագործված օտար բառերի բացատրությունը: Ներկա մենագրությամբ Կ. Մութաֆյանը նոր լիցք է հաղորդում հայ պարմագրությանը, կարարելով բազմաթիվ ճշգրտումներ ու սրբագրություններ: Այդ գործում հեղինակին մեծ օգնություն է ցույց տվել գրաբարի և, հարկապես՝ ֆրանսերենի նրբին գիտակ Ազնես Ուգունյանը, որը գրքում արեղատրելու համար վերընթերցել է Պապկեռնի մոտ գրվող Ս. Փրկիչ եկեղեցու 1241 թ. /լուս. 99-100/ և Եգիպտոսի Սպիտակ վանքի /լուս. 227/⁶¹ արձանագրությունները, և իր խորհուրդներով ավելի հարակեցրել գրաբար բնագրերի ընկալումը աշխատության մեջ: Նմանարիպ հսկայածավալ աշխատանքում կարելի է մաքրագույց անել նաև վրիպումներ, որոնք, սակայն, երբեմն չեն կարող դույզն-ինչ սրվել ձգել կարարված տիպանական աշխատանքի վրա, խամբեցնել մենագրության բերած թարմ շունչը հայ պարմագրության ասպարեզ: Կ. Մութաֆյանի մենագրությունը գալիս է հարստացնելու հայ պարմագրական միտքը, նոր թափ հաղորդելու զարգացած ավարարիքության դարաշրջանի հեղինակությանը մեղանում:

Գրքի երկրորդ հատորը ամբողջովին հարկացված է վերևում շարադրված նյութի ընկալմանը օգնող օժանդակ նյութերին: Նեղինակը հաճախ լրացնելով եղածները, կազմել է 84 ծանոթարանական աղյուսակներ, որ ներկայացված են Բագրատունիների, Արծ-

59 Տե՛ս Ընդհանրական թողթը ..., էջ 39-40:

60 Տե՛ս Ա. Բոգոյան, «Օտար թարգմանիչները հայ մարմնագրության մեջ», էջ 273-282:

61 Վիշարակված արձանագրությունների ճշգրտված վերծանությունների թարգմանությունները առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ /տե՛ս նաև, էջ 347-348, 257/ :

բունիների, Սյունիքի և Արցախի իշխանական փոխարինների, Պաշտպանության, Թոշակայինների, Զարգացման, Վաճառականների, Պաշտպանության, Դատականների, Սեփեդիանների, Ռաբիանների, Ներքինների, Թոշակայինների, Լուսինյանների, Շարաֆների, Խաչակրաց պետությունների ղեկավարների, Բյուզանդական կայսրերի, Վրաց Բագրատունիների, Շեղաղյանների, Իկոնիայի սուլթանների, մոնղոլ խանների, հարկապես հայ և այլազգի իշխանական ընտանիքների կապերի՝ ամուսնական գույքերի ցանկերը: Այսպես Վ. Մուրադյանը փորձել է ճշգրտել, լրացնել, համալրել և սրբագրել Վ. Թումանյանի, Վ. Ռուդոլֆ-Կոլենդերգի և այլոց ծննդաբանական աղյուսակները, որոնք հերոսականորեն հղվում են վերևում ներկայացված հերազմական մասում: Առաջին հատորում ներկայացված է յոթը խոսքով և է. Վան Լուի հերոսաբեր կազմած (74) և միջնադարյան (4) բարբառներով, զանազան հայերեն և այլալեզու ձեռագրերի ու նրանցում արել գրած մանրանկարների վերաբարդություններով, միջնադարյան հուշարձանների, վավերագրերի, դրամների, կնիքների և վիմագրերի լուսանկարներով (մոտ 230): Պիտի առանձնակի շեշտել գրքում առկա լուսանկարների բարձր որակը, որոնք մի նշանակալի մասով պայմանավորված են Զավեն Սարգսյանի և Նրայր Նավթ Խաչերյանի մասնագիտական հմտությամբ:

Վերջում փրվում է, բնութագրված է յոթին վերաբերող ողջ մարտնչությունը (էջ 305-352), լիակատար անվանացանկը (էջ 355-395): Պիտի ասել, որ օժանդակ է յոթերին ուղեկցում են, հերազմության բնագիրը լրացնող, համառոտ բացատրագրեր, իսկ լուսանկարները ընդգրկված են պարմաբանի հոսանքությամբ և արվեստագետին պարզաձև բնութագրությամբ: Լուսանկարների թողած պատկերայինը գումարվել է նաև հրապարակչական մանրակրկիտ և մասնագիտական նորը աշխատանքը: Մի խոսքով գիրքը ոչ միայն հաջողված պարմագիտական հերազմություն է, այլ նաև մերօրյա հրապարակչական արվեստի ցուցադրության բացառիկ օրինակ:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ

Պարմական գիր. դոկտոր